ՄԵԾԱՄՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-22/31-2

ք. Մեծամոր «29» 09 2022թ.

Մեծամորի համայնքապետարանը ի դեմս համայնքի ղեկավար՝ Վահրամ Խաչատրյանի, ով գործում է «ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՊՐԵՄԻՈՒՄ ՇԻՆ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Կարեն Արիստակեսյանի, որը գործում է «ՊՐԵՄԻՈՒՄ ՇԻՆ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված գազիֆիկացման աշխատանքներ (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 4-րդ չափաբաժնի մասով՝ 120 օրացուցային օրվա ընթացքում, 9-րդ չափաբաժնի մասով՝ 130 օրացուցային օրվա ընթացքում:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օր՝ եթե նախագծա-նախահաշվային փաստաթղթերով այլ ժամկետ սահմանված չէ: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ [illegible] Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ

վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 56,160,000.00 (հիսունվեց միլիոն մեկ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ, որից 9,360,000.00 (ինը միլիոն երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

4-րդ չափաբաժին 27,480,000.00 (քսանյոթ միլիոն չորս հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ՝ որից 4,580,000.00 (չորս միլիոն հինգ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

9-րդ չափաբաժին 28,680,000.00 (քսանութ միլիոն վեց հարյուր ութսուն հազար ՀՀ դրամ՝ որից 4,780,000.00 (չորս միլիոն յոթ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնորդը վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում: Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված պայմանագրի դեպքում տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 18 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 1.2, N 1.3, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի
վարչական կենտրոն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900332239392, 900332001586
ՀՎՀՀ 04440608

համայնքի ղեկավար_____Վահրամ Խաչատրյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Պրեմիում Շին>> ՍՊԸ
Արարատի մարզ,Ոստան համայնք,Արարատյան
9
<<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ
Հ/Հ 163098016666
ՀՎՀՀ 04234373

Տնօրեն_____Կ.Աղիստակեսյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 1
« 29 » 09 2022թ. կնքված
ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-22/31-2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

աշխատանքի						կատարման	
Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Հատկանիշները (տեխնիկական բնութագիր)	Չափման միավորը	Ընդհանուր քանակը	Ընդհանուր գումար/ ՀՀ դրամ	Հասցեն	Ժամկետը
45231115/4	ՀՀ Արմավիրի մարզ Մեծամոր համայնք Նոր Արմավիր բնակավայրի գազիֆիկացման աշխատանքներ	ՀՀ Արմավիրի մարզ Մեծամոր համայնք Նոր Արմավիր բնակավայրի գազիֆիկացման աշխատանքների կատարման ծավալաթերթ-նախահաշիվը ներկայացված է կից Հավելված 1.2-ով, իսկ օրացուցային գրաֆիկը Հավելված 1.1-ով: Աշխատանքների կատարման համար անհրաժեշտ բոլոր նյութերը, գործիքները, տրանսպորտային միջոցները ապահովում է կատարողը/կապալառուն իր միջոցներով:	դրամ	1	27,480,000.00	Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք, գ. Նոր Արմավիր	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 120 օրացուցային օրվա ընթացքում
45231115/9	ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Մարգարա բնակավայրի փողոցների գազամատակարարման աշխատանքներ	ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Մարգարա բնակավայրի փողոցների գազամատակարարման աշխատանքների կատարման ծավալաթերթ-նախահաշիվը ներկայացված է կից Հավելված 1.3-ով, իսկ օրացուցային գրաֆիկը Հավելված 1.1-ով: Աշխատանքների կատարման համար անհրաժեշտ բոլոր նյութերը, գործիքները, տրանսպորտային միջոցները ապահովում է կատարողը/կապալառուն իր միջոցներով:	դրամ	1	28,680,000.00	Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք, գ. Մարգարա	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 130 օրացուցային օրվա ընթացքում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի
վարչական կենտրոն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900332239392, 900332001586
ՀՎՀՀ 04440608

համայնքի ղեկավար----------Վահրամ Խաչատրյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Պրեմիում Շին>> ՍՊԸ
Արարատի մարզ,Ոստան համայնք,Արարատյան
9
<<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ
Հ/Հ 163098016666
ՀՎՀՀ 04234373

Տնօրեն ----------Է.Արիստակեսյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 1.1
«29» 09 2022թ. կնքված
ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-22/31-2 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Չափաբաժին 4

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	ՀՀ Արմավիրի մարզ Մեծամոր համայնք Նոր Արմավիր բնակավայրի գազիֆիկացման աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 120 օրացուցային օրվա ընթացքում
ԸՆԴԱՄԵՆԸ		Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 120 օրացուցային օրվա ընթացքում

Չափաբաժին 9

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Մարգարա բնակավայրի փողոցների գազամատակարարման աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 130 օրացուցային օրվա ընթացքում
ԸՆԴԱՄԵՆԸ		Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 130 օրացուցային օրվա ընթացքում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի վարչական կենտրոն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900332239392, 900332001586
ՀՎՀՀ 04440608

համայնքի ղեկավար՝ Վահրամ Խաչատրյան
/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Պրեմիում Շին>> ՍՊԸ
Արարատի մարզ,Ոստան համայնք,Արարատյան 9
<<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ
Հ/Հ 163098016666
ՀՎՀՀ 04234373

Տնօրեն՝ Կ.Արիստակեսյան
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված թիվ 1.2
«29» 09 2022թ. կնքված
ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-22/31-2 ծածկագրով պայմանագրի

Ծավալաթերթ-Նախահաշիվ* **
ՀՀ Արմավիրի մարզ Մեծամոր համայնք Նոր Արմավիր բնակավայր գազիֆիկացման աշխատանքների կատարման

NN	Աշխատանքների անվանումը	չ/մ	ծավալը	Միավորի արժեքը	Ընդամենը /հազ դրամ/
1	2	3	4	5	6
	1.Գազիֆիկացում 12 փողոց				
1	Փոսերի քանդում ձեռքով մետաղական հենասյուների համար III կարգի գրունտում և հարթեցում տեղում	$մ^3$	5.58	4.00	22.32
2	Բետոնե հիմքերի պատրաստում հենարանների համար B12.5 դասի բետոնից	մ3	5.58	40.00	223.20
3	Հենարանների տեղադրում պողպատե խողովակներիցD=76x3,0մմ H= 3(3,7)մ 31հատ	տ	0.62	900.00	557.44
4	Կիսախողովակների տեղադրում	կգ	19.40	1.00	19.40
5	Պարոնիտ	կգ	7.39	0.70	5.17
6	Մետաղական թիթեղ հենարանների տակ δ=3մմ	կգ	65.10	1.00	65.10
7	Հենասյուներիի մակերևույթի մաքրում /յուղազրկում/	մ2	27.30	0.80	21.84
8	Հենասյուների յուղաներկում 2 անգամ	մ2	27.30	1.20	32.76
9	Խողովակաշարի անցկացում պողպատե խողովակներից Φ76x3,5մմ պնեումատիկ փորձարկումով	գմ	194.00	6.50	1261.00
10	Խողովակաշարի մակերևույթի մաքրում /յուղազրկում/	մ2	46.29	0.80	37.03
11	Գազատարի յուղաներկում 2 անգամ	մ2	46.29	1.20	55.55
12	Համակարգի փչամաքրում	գմ	194.00	0.70	135.80
13	Պողպատե ձևավավոր մասերի տեղադրում՝	կգ	11.50	1.00	11.50
14	Պողպատե անկյունակ 90^0 Φ76x6 արժեքը	հատ	6.00	1.00	6.00
15	Տրամագծի անցում 76x5/57x5 արժեքը	հատ	1.00	1.00	1.00
16	Խցափակիչ Φ76x3,5 արժեքը	հատ	1.00	1.00	1.00
17	Անշարժ հենարան H=1,5 dպ70,	կգ	78.40	0.70	54.88
18	Նախագծվող գազատարի ներմիացում գործողին Φ76x3.5-dպ50	տեղ	1.00	10.00	10.00
	Ընդամենը				**2521.00**
	2.Գազիֆիկացում 13 փողոց				
1	Փոսերի քանդում ձեռքով մետաղական հենասյուների համար III կարգի գրունտում և հարթեցում տեղում	$մ^3$	9.22	4.00	36.88
2	Բետոնե հիմքերի պատրաստում հենարանների համար B12.5 դասի բետոնից	մ3	9.22	40.00	368.80
3	Հենարանների տեղադրում պողպատե խողովակներիցD=76x3,0մմ H= 5(6)մ 1հատ	տ	0.03	900.00	29.16
4	Հենարանների տեղադրում պողպատե խողովակներիցD=76x3,0մմ H= 3(3,7)մ 49հատ	տ	0.98	900.00	881.12
5	Կիսախողովակների տեղադրում	կգ	41.90	1.00	41.90
6	Պարոնիտ	կգ	12.17	0.70	8.52
7	Մետաղական թիթեղ հենարանների տակ δ=3մմ	կգ	105.00	1.00	105.00
8	Հենասյուներիի մակերևույթի մաքրում /յուղազրկում/	մ2	52.34	0.80	41.87
9	Հենասյուների յուղաներկում 2 անգամ	մ2	52.34	1.20	62.81
10	Խողովակաշարի անցկացում պողպատե խողովակներից	գմ	327.00	8.00	2616.00

11	Խողովակաշարի մակերևույթի մաքրում /յուղազրկում/	մ2	91.38	0.80	73.10
12	Գազատարի յուղաներկում 2 անգամ	մ2	91.38	1.20	109.66
13	Համակարգի փչամաքրում	գմ	327.00	0.70	228.90
14	Պողպատե ձևավավոր մասերի տեղադրում՝	կգ	26.90	1.00	26.90
15	Պողպատե անկյունակ 90^0 Φ89x6 արժեքը	հատ	10.00	2.00	20.00
16	Եռաբաշխիկ Φ89x6 արժեքը	հատ	1.00	3.00	3.00
17	Խցափակիչ Φ89x4 արժեքը	հատ	1.00	1.00	1.00
18	Անշարժ հենարան H=1,5 dպ 80,	կգ	80.40	0.70	56.28
	Ընդամենը				**4710.90**
	3.Գազիֆիկացում 14 փողոց				
1	Փոսերի քանդում ձեռքով մետաղական հենասյուների համար III կարգի գրունտում և հարթեցում տեղում	$մ^3$	11.60	4.00	46.40
2	Բետոնե հիմքերի պատրաստում հենարանների համար B12.5 դասի բետոնից	մ3	11.60	40.00	464.00
3	Հենարանների տեղադրում պողպատե խողովակներիցD=76x3,0մմ H= 5(6)մ 2հատ	տ	0.06	900.00	58.32
4	Հենարանների տեղադրում պողպատե խողովակներիցD=76x3,0մմ H= 3(3,7)մ 60հատ	տ	1.20	900.00	1078.92
5	Կիսախողովակների տեղադրում	կգ	37.20	1.00	37.20
6	Պարոնիտ	կգ	14.31	0.70	10.02
7	Մետաղական թիթեղ հենարանների տակ δ=3մմ	կգ	126.00	1.00	126.00
8	Հենասյուներիի մակերևույթի մաքրում /յուղազրկում/	մ2	55.80	0.80	44.64
9	Հենասյուների յուղաներկում 2 անգամ	մ2	55.80	1.20	66.96
10	Խողովակաշարի անցկացում պողպատե խողովակներից Φ76x3,5մմ պնեումատիկ փորձարկումով	գմ	364.00	6.50	2366.00
11	Խողովակաշարի մակերևույթի մաքրում /յուղազրկում/	մ2	86.80	0.80	69.44
12	Գազատարի յուղաներկում 2 անգամ	մ2	86.80	1.20	104.16
13	Համակարգի փչամաքրում	գմ	364.00	0.70	254.80
14	Պողպատե ձևավավոր մասերի տեղադրում՝	կգ	20.30	1.00	20.30
15	Պողպատե անկյունակ 90^0 Φ76x6 արժեքը	հատ	10.00	1.00	10.00
16	Եռաբաշխիչ Φ76x6 արժեքը	հատ	1.00	3.00	3.00
17	Տրամագծի անցում 76x5/57x5 արժեքը	հատ	1.00	1.00	1.00
18	Խցափակիչ Φ76x3,5 արժեքը	հատ	2.00	1.00	2.00
19	Անշարժ հենարան H=1,5dպ 70	կգ	78.40	0.70	54.88
20	Նախագծվող գազատարի ներմիացում գործողին Φ76x3.5-dպ50	տեղ	1.00	10.00	10.00
	Ընդամենը				**4828.04**
	4.Գազիֆիկացում 21 փողոց				
1	Փոսերի քանդում ձեռքով մետաղական հենասյուների համար III կարգի գրունտում և հարթեցում տեղում	$մ^3$	22.58	4.00	90.32
2	Բետոնե հիմքերի պատրաստում հենարանների համար B12.5 դասի բետոնից	մ3	22.58	40.00	903.20
3	Հենարանների տեղադրում պողպատե խողովակներիցD=133x3,5մմ H=5 (6) 8հատ	տ	0.54	750.00	402.48
4	Հենարանների տեղադրում պողպատե խողովակներիցD=76x3,0մմ H= 5(6)մ 6հատ	տ	0.19	900.00	174.96
5	Հենարանների տեղադրում պողպատե խողովակներիցD=76x3,0մմ H= 3(3,7)մ 94հատ	տ	1.88	900.00	1690.31
6	Կիսախողովակների տեղադրում	կգ	92.70	1.00	92.70
7	Պարոնիտ	կգ	27.20	0.70	19.04
8	Մետաղական թիթեղ հենարանների տակ δ=3մմ	կգ	226.80	1.00	226.80
9	Հենասյուներիի մակերևույթի մաքրում /յուղազրկում/	մ2	111.60	0.80	89.28

10	Հենասյուների յուղաներկում 2 անգամ	մ2	111.60	1.20	133.92
11	Խողովակաշարի անցկացում պողպատե խողովակներից Φ159x4,5մմ, պնեումատիկ փորձարկումով	գմ	48.00	12.00	576.00
12	Խողովակաշարի անցկացում պողպատե խողովակներից Φ89x4մմ, պնեումատիկ փորձարկումով	գմ	630.00	8.00	5040.00
13	Խողովակաշարի մակերևույթի մաքրում /յուղազրկում/	մ2	200.02	0.80	160.02
14	Գազատարի յուղաներկում 2 անգամ	մ2	200.02	1.20	240.02
15	Համակարգի փչամաքրում	գմ	678.00	0.70	474.60
16	Պողպատե ձևավավոր մասերի տեղադրում՝	կգ	92.90	1.00	92.90
17	Պողպատե անկյունակ 90^0 Φ89x6 արժեքը	հատ	32.00	2.00	64.00
18	Եռաբաշխիկ Φ89x6 արժեքը	հատ	1.00	3.00	3.00
19	Պողպատե անցում Φ108x6.0/Φ 89x6.0մմ արժեքը	հատ	1.00	2.00	2.00
20	Խցափակիչ Φ159x4.5 արժեքը	հատ	8.00	4.00	32.00
21	Խցափակիչ Φ89x4 արժեքը	հատ	1.00	1.00	1.00
22	Անշարժ հենարան H=1,5 dպ 80,	կգ	241.20	0.70	168.84
23	Նախագծվող գազատարի ներմիացում գործողին Φ89x4-dպ100	տեղ	1.00	15.00	15.00
	4.1. Պաշտպանիչ ցանց h 1.0 2 կոմպլեկտ				
1	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	$մ^3$	5.00	1.93	9.66
2	Ավելորդ գրունտի բարձում ա/ինքնաթափ մեքենաների վրա և տեղափոխում 1կմ	տն	9.00	1.00	9.00
3	Պաշտպանիչ ցանցի մետաղական կոնստրուկցիաների տեղադրում	տն	0.09	80.00	7.23
4	Շերտավոր պողպատ 4x80 l=80	մ	0.80	2.00	1.60
5	Անկյունավոր պողպատ 50x50x5	մ	3.00	3.00	9.00
6	Կլոր պողպատ Β8	կգ	7.20	0.50	3.60
7	Մեկուսիչ ШПК-10	հատ	16.00	4.50	72.00
8	Ձող ШУ-20	կգ	3.52	0.70	2.46
9	Մետաղալար Φ2	կգ	0.12	0.80	0.10
10	Շերտավոր պողպատ 4x40	մ	15.00	1.00	15.00
11	Անկյունավոր պողպատ 63x63x5	մ	9.02	2.00	18.04
	Ընդամենը				**10840.07**
	Ընդամենը				**22900.00**
	ԱԱՀ 20%				**4580.00**
	Ընդամենը				**27480.00**

*Արժեքը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ «Շահույթը» և ԱԱՀ-ն՝ 20%

** Աշխատանքների կատարման համար անհրաժեշտ բոլոր նյութերը, գործիքները, տրանսպորտային միջոցները ապահովում է կատարողը/կապալառուն իր միջոցներով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի վարչական կենտրոն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900332239392, 900332001586
ՀՎՀՀ 04440608

համայնքի ղեկավար----------Վահրամ Խաչատրյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Պրեմիում Շին>> ՍՊԸ
Արարատի մարզ,Ոստան համայնք,Արարատյան 9
<<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ
Հ/Հ 163098016666
ՀՎՀՀ 04234373

Տնօրեն ----------Կ.Արիստակեսյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 1.3
«29» 09 2022թ. կնքված
ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-22/31-2 ծածկագրով պայմանագրի

Ծավալաթերթ-Նախահաշիվ* **

Հ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Մարգարա բնակավայրի փողոցների գազամատակարարման աշխատանքների կատարման

NN	Աշխատանքների անվանումը	չ/մ	ծավալը	Միավորի արժեքը	Ընդամենը /հազ դրամ/
1	2	3	4	5	6
	1.16-րդ փողոցի գազատար				
1	Հենասյուների բների փորում 3-րդ կարգի	մ3	18.00	3.00	54.00
2	Ավելորդ հողի փռում տեղում	մա	10.00	1.40	14.00
3	Շին.աղբի և ավելորդ բնահողի բարձում ինքնաթ. էքսկավատ.	1000մ3	0.01	600.00	4.80
4	Տեղափոխում 2 կմ լցակույտ	տն	14.40	1.00	14.40
5	Բետոնե հիմքերի կառուցում Վ-12,5	մա	7.00	40.00	280.00
6	Ավազի նախաշերտի կառուցում 100մմ	մ3	1.00	8.00	8.00
7	Մետաղական հենարանների տեղադրում	տն	0.60	90.00	53.64
8	Պողպատե խողովակ d=76*2,5մմ	մ	72.00	4.00	288.00
9	Պողպատե խողովակ d=57*2,5մմ	մ	80.00	3.30	264.00
10	Մետաղական անշարժ հենարանների տեղադրում Փ57մմ խողովակի տակ 2հատ	տն	0.15	800.00	120.69
11	Մետաղական շնվածքներ հենարանների համար	տն	0.04	700.00	28.00
12	Պողպատե խողովակի տեղադրում հենարանների վրա d=57*3,5մմ / փորձարկումով /	մ	190.00	5.20	988.00
13	Պողպատե Փ57մմ ձևավոր մասերի տեղադրում	տն	0.02	1000.00	16.00
14	Պողպատե Փ57մմ ձևավոր մասերի արժեքը	հատ	20.00	0.70	14.00
15	Գազատարի փչամաքրում և պնեվմատիկ փորձարկում	1000մ	0.19	200.00	38.00
16	Գազատարի խցափակում	հատ	1.00	4.00	4.00
17	Խողովակների և հենարանների յուղաներկում /2 անգամ/	100 մ2	0.75	100.00	75.00
18	Ռետինե տակդիր	մ2	1.20	2.50	3.00
19	Սողնակային փականի տեղադրում d=50 մմ կցաշուրթերով	հատ	1.00	15.00	15.00
	Ընդամենը				**2282.53**
	2.Մայրուղային խողովակաշար				
1	Հենասյուների բների փորում 3-րդ կարգի	մ3	40.00	3.00	120.00
2	Ավելորդ հողի փռում տեղում	մա	18.00	1.40	25.20
3	Շին.աղբի և ավելորդ բնահողի բարձում ինքնաթ. էքսկավատ.	1000մ3	0.02	600.00	13.20
4	Տեղափոխում 2 կմ լցակույտ	տն	39.60	1.00	39.60
5	Բետոնե հիմքերի կառուցում Վ-12,5	մա	19.00	40.00	760.00
6	Ավազի նախաշերտի կառուցում 100մմ	մ3	3.00	8.00	24.00
7	Մետաղական հենարանների տեղադրում	տն	1.48	90.00	133.02
8	Պողպատե խողովակ d=108*2,5 մմ	մ	55.00	5.00	275.00
9	Պողպատե խողովակ d=89*2,5մմ	մ	210.00	4.50	945.00
10	Մետաղական անշարժ հենարանների տեղադրում Փ108*4մմ խողովակի տակ 6հատ	տն	0.48	800.00	385.01
11	Մետաղական շնվածքներ հենարանների համար	տն	0.20	700.00	140.00
12	Պողպատե խողովակի տեղադրում հենարանների վրա d=108*4մմ / փորձարկումով /	մ	600.00	7.00	4200.00
13	Պողպատե Փ108մմ ձևավոր մասերի տեղադրում	տն	0.02	1000.00	16.80
14	Պողպատե Փ108մմ ձևավոր մասերի արժեքը	հատ	21.00	4.00	84.00
15	Գազատարի փչամաքրում և պնեվմատիկ փորձարկում	1000մ	0.60	200.00	120.00

17	Միացում գոյություն ունեցող գազատարին	հատ	1.00	33.60	33.60
18	Ռետինե տակդիր	մ2	6.30	2.50	15.75
19	Սողնակային փականի տեղադրում d=100 մմ կցաշուրթերով	հատ	2.00	25.00	50.00
20	Պահարանային գազակարգավորիչ կայանի տեղադրում ՊԳԿԿ GSA 40, 6bar 0,4-65մ3/ժ, հաշվիչ հանգույցով« էլեկտրոնային ճշտիչով	հատ	1.00	1124.03	1124.03
21	Ավազի նախաշերտի կառուցում 100մմ	մ3	0.60	8.00	4.80
22	Բետոնե հիմքերի կառուցում Վ-15 հաշվիչ հանգույցի համար	մա	0.50	53.89	26.94
	Ընդամենը				**8605.95**
	3.12-րդ փողոցի գազատար				
1	Հենասյուների բների փորում 3-րդ կարգի	մ3	31.00	3.00	93.00
2	Ավելորդ հողի փռում տեղում	մա	16.00	1.40	22.40
3	Շին.աղբի և ավելորդ բնահողի բարձում ինքնաթ. էքսկավատ.	1000մ3	0.02	600.00	9.00
4	Տեղափոխում 2 կմ լցակույտ	տն	27.00	1.00	27.00
5	Բետոնե հիմքերի կառուցում Վ-12,5	մա	12.00	40.00	480.00
6	Ավազի նախաշերտի կառուցում 100մմ	մ3	3.00	8.00	24.00
7	Մետաղական հենարանների տեղադրում	տն	0.89	90.00	79.92
8	Պողպատե խողովակ d=76*2,5մմ	մ	70.00	4.00	280.00
9	Պողպատե խողովակ d=57*2,5մմ	մ	170.00	3.30	561.00
10	Մետաղական անշարժ հենարանների տեղադրում Փ57մմ խողովակի տակ 5հատ	տն	0.38	800.00	301.72
11	Մետաղական շնվածքներ հենարանների համար	տն	0.09	700.00	59.50
12	Պողպատե խողովակի տեղադրում հենարանների վրա d=57*3,5մմ / փորձարկումով /	մ	370.00	5.20	1924.00
13	Պողպատե Փ57մմ ձևավոր մասերի տեղադրում	տն	0.03	1000.00	25.60
14	Պողպատե Փ57մմ ձևավոր մասերի արժեքը	հատ	32.00	0.70	22.40
15	Գազատարի փչամաքրում և պնեվմատիկ փորձարկում	1000մ	0.37	200.00	74.00
16	Գազատարի խցափակում	հատ	1.00	4.00	4.00
17	Խողովակների և հենարանների յուղաներկում /2 անգամ/	100 մ2	1.30	100.00	130.00
18	Ռետինե տակդիր	մ2	3.00	2.50	7.50
19	Սողնակային փականի տեղադրում d=50 մմ կցաշուրթերով	հատ	1.00	15.00	15.00
	Ընդամենը				**4140.04**
	4.Գազատարի էկրանային պաշտպանություն				
1	Հենասյուների բների փորում 3-րդ կարգի	մ3	2.42	3.00	7.26
2	Ավելորդ հողի փռում տեղում	մա	0.04	1.40	0.06
3	Շին.աղբի և ավելորդ բնահողի բարձում ինքնաթ. էքսկավատ.	1000մ3	0.00	600.00	1.43
4	Տեղափոխում 2 կմ լցակույտ	տն	4.28	1.00	4.28
5	Բետոնե հիմքերի կառուցում Վ-12,5	մա	2.38	40.00	95.20
6	Մետաղական էկրանային պաշտպանիչ ցանցի տեղադրում	տն	0.30	69.00	20.41
7	Ցանցային վահան	մ2	12.00	1.00	12.00
8	Պողպատե անկյունակ 50*50*5մմ	մ	28.80	3.00	86.40
9	Պողպատե խողովակ d=76*2,5մմ	մ	23.20	3.80	88.05
10	Պողպատե թիթեղ 100*100*6մմ	մ2	0.16	47.00	7.52
11	Ցանցի և հենարանների յուղաներկում /2 անգամ/	100 մ2	0.09	100.00	9.00
	Ընդամենը				**331.61**
	5.13-րդ փողոցի գազատար				
1	Հենասյուների բների փորում 3-րդ կարգի	մ3	45.00	3.00	135.00
2	Ավելորդ հողի փռում տեղում	մա	21.00	1.40	29.40
3	Շին.աղբի և ավելորդ բնահողի բարձում ինքնաթ. էքսկավատ.	1000մ3	0.02	600.00	14.40
		[illegible]	43.20	1.00	43.20

5	Բետոնե հիմքերի կառուցում Վ-12,5	մա	20.00	40.00	800.00
6	Ավազի նախաշերտի կառուցում 100մմ	մ3	4.00	8.00	32.00
7	Մետաղական հենարանների տեղադրում	տն	1.33	90.00	119.79
8	Պողպատե խողովակ d=133*3,0 մմ	մ	13.00	10.00	130.00
9	Պողպատե խողովակ d=108*2,5 մմ	մ	29.00	5.00	145.00
10	Պողպատե խողովակ d=76*2,5մմ	մ	180.00	4.00	720.00
11	Պողպատե խողովակ d=57*2,5մմ	մ	60.00	3.30	198.00
12	Մետաղական անշարժ հենարանների տեղադրում Փ57մմ խողովակի տակ 3հատ	տն	0.23	800.00	181.03
13	Մետաղական անշարժ հենարանների տեղադրում Փ89մմ խողովակի տակ 3հատ	տն	0.23	800.00	187.10
14	Մետաղական շնվածքներ հենարանների համար	տն	0.11	700.00	75.60
15	Պողպատե խողովակի տեղադրում հենարանների վրա d=159*4,0 մմ / փորձարկումով /	մ	14.00	12.00	168.00
16	Պողպատե խողովակի տեղադրում հենարանների վրա d=57*3,5մմ / փորձարկումով /	մ	260.00	5.20	1352.00
17	Պողպատե խողովակի տեղադրում հենարանների վրա d=89*3,5մմ / փորձարկումով /	մ	210.00	5.00	1050.00
18	Պողպատե Փ89մմ ձևավոր մասերի տեղադրում	տն	0.01	1000.00	12.80
19	Պողպատե Փ89մմ ձևավոր մասերի արժեքը	հատ	16.00	2.45	39.20
20	Պողպատե Փ57մմ ձևավոր մասերի տեղադրում	տն	0.02	1000.00	19.20
21	Պողպատե Փ57մմ ձևավոր մասերի արժեքը	հատ	24.00	0.70	16.85
22	Գազատարի փչամաքրում և պնեվմատիկ փորձարկում	1000մ	0.48	200.00	96.80
23	Գազատարի խցափակում	հատ	2.00	4.00	8.00
24	Խողովակների և հենարանների յուղաներկում /2 անգամ/	100 մ2	2.10	100.00	20.00
25	Ռետինե տակդիր	մ2	4.20	2.50	10.50
26	Սողնակային փականի տեղադրում d=80 մմ կցաշուրթերով	հատ	1.00	20.00	20.00
27	Սողնակային փականի տեղադրում d=50 մմ կցաշուրթերով	հատ	2.00	15.00	30.00
	Ընդամենը				**5653.87**
	6.2-րդ փողոցի գազատար				
1	Հենասյուների բների փորում 3-րդ կարգի	մ3	18.00	3.00	54.00
2	Ավելորդ հողի փռում տեղում	մա	8.00	1.40	11.20
3	Շին.աղբի և ավելորդ բնահողի բարձում ինքնաթ. էքսկավատ.	1000մ3	0.01	600.00	6.00
4	Տեղափոխում 2 կմ լցակույտ	տն	18.00	1.00	18.00
5	Բետոնե հիմքերի կառուցում Վ-12,5	մա	7.00	40.00	280.00
6	Ավազի նախաշերտի կառուցում 100մմ	մ3	1.20	8.00	9.60
7	Մետաղական հենարանների տեղադրում	տն	0.40	90.00	36.36
8	Պողպատե խողովակ d=133*3,0 մմ	մ	13.00	10.00	130.00
9	Պողպատե խողովակ d=108*2,5 մմ	մ	13.00	5.00	65.00
10	Պողպատե խողովակ d=57*2,5մմ	մ	58.00	3.30	191.40
11	Մետաղական շնվածքներ հենարանների համար	տն	0.04	700.00	27.30
12	Պողպատե խողովակի տեղադրում հենարանների վրա d=159*4,0 մմ / փորձարկումով /	մ	10.00	12.00	120.00
13	Պողպատե խողովակի տեղադրում հենարանների վրա d=57*3,5մմ / փորձարկումով /	մ	105.00	5.20	546.00
14	Պողպատե Փ57մմ ձևավոր մասերի տեղադրում	տն	0.00	1000.00	4.00
15	Պողպատե Փ57մմ ձևավոր մասերի արժեքը	հատ	5.00	0.70	3.50
16	Գազատարի փչամաքրում և պնեվմատիկ փորձարկում	1000մ	0.12	200.00	23.00
17	Գազատարի խցափակում	հատ	3.00	4.00	12.00
18	Խողովակների և հենարանների յուղաներկում /2 անգամ/	100 մ2	0.50	100.00	50.00
19	Միացում գոյություն ունեցող գազատարին d=50/76	հատ	1.00	10.00	10.00
20	Ռետինե տակդիր	մ2	0.70	2.50	1.75
21	Սողնակային փականի տեղադրում d=50 մմ կցաշուրթերով	հատ	1.00	15.00	15.00
	[illegible]				**1614.11**

	7.10-րդ փողոցի գազատար				
1	Հենասյուների բների փորում 3-րդ կարգի	մ3	10.00	3.00	30.00
2	Ավելորդ հողի փռում տեղում	մա	5.35	1.40	7.49
3	Շին.աղբի և ավելորդ բնահողի բարձում ինքնաթ. էքսկավատ.	1000մ3	0.00	600.00	2.79
4	Տեղափոխում 2 կմ լցակույտ	տն	8.37	1.00	8.37
5	Բետոնե հիմքերի կառուցում Վ-12,5	մա	4.00	40.00	160.00
6	Ավազի նախաշերտի կառուցում 100մմ	մ3	0.65	8.00	5.20
7	Մետաղական հենարանների տեղադրում	տն	0.15	90.00	13.68
8	Պողպատե խողովակ d=57*2,5մմ	մ	45.00	3.30	148.50
9	Մետաղական շնվածքներ հենարանների համար	տն	0.03	700.00	18.90
10	Պողպատե խողովակի տեղադրում հենարանների վրա d=57*3,5մմ / փորձարկումով /	մ	115.00	5.20	598.00
11	Պողպատե Φ57մմ ձևավոր մասերի տեղադրում	տն	0.00	1000.00	3.20
12	Պողպատե Φ57մմ ձևավոր մասերի արժեքը	հատ	4.00	0.70	2.80
13	Գազատարի փչամաքրում և պնեվմատիկ փորձարկում	1000մ	0.12	200.00	23.00
14	Գազատարի խցափակում	հատ	1.00	4.00	4.00
15	Խողովակների և հենարանների յուղաներկում /2 անգամ/	100 մ2	0.30	100.00	30.00
16	Միացում գոյություն ունեցող գազատարին d=50	հատ	1.00	10.00	10.00
17	Ռետինե տակդիր	մ2	0.40	2.50	1.00
18	Սողնակային փականի տեղադրում d=50 մմ կցաշուրթերով	հատ	1.00	15.00	15.00
	Ընդամենը				**1081.93**
	Ընդամենը				**23900.00**
	ԱԱՀ 20%				**4780.00**
	Ընդամենը				**28680.00**

*Արժեքը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ «Շահույթը» և ԱԱՀ-ն՝ 20%

** Աշխատանքների կատարման համար անհրաժեշտ բոլոր նյութերը, գործիքները, տրանսպորտային միջոցները ապահովում է կատարողը/կապալառուն իր միջոցներով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի վարչական կենտրոն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900332239392, 900332001586
ՀՎՀՀ 04440608

համայնքի ղեկավար_____Վահրամ Խաչատրյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Պրեմիում Շին>> ՍՊԸ
Արարատի մարզ,Ոստան համայնք,Արարատյան 9
<<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ
Հ/Հ 163098016666
ՀՎՀՀ 04234373

Տնօրեն_____Կ.Մարիստակեսյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« 29 » 09 2022թ. կնքված
ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-22/31-2 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

			աշխատանքի												
			դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
ոավերով սատեսվող փաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
4	45231115/4	ՀՀ Արմավիրի մարզ Մեծամոր համայնք Նոր Արմավիր բնակավայրի գազիֆիկացման աշխատանքներ	-	-	-	-	-	-	-	-	27,480,000.00	27,480,000.00	27,480,000.00	27,480,000.00	27,480,000.00
9	45231115/9	ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Մարգարա բնակավայրի փողոցների գազամատակարարման աշխատանքներ	-	-	-	-	-	-	-	-	28,680,000.00	28,680,000.00	28,680,000.00	28,680,000.00	28,680,000.00

ոման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի վարչական կենտրոն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900332239392, 900332001586
ՀՎՀՀ 04440608

համայնքի ղեկավար_____Վահրամ Խաչատրյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Պրեմիում Շին>> ՍՊԸ
Արարատի մարզ,Ոստան համայնք,Արարատյան 9
<<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ
Հ/Հ 163098016666
ՀՎՀՀ 04234373

Տիգրան Գ.Արիստակեսյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
«29» 09 2022թ. կնքված
ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-22/31-2 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
«29» 09 2022թ. կնքված
ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-22/31-2 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն